

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻՆ  
ՈՒ ՁԵՂՆԱՀԱՐԿԵՐՈՒՄ ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ ՏԵՂԱԿԱՅԵԼՈՒ  
ԵՎ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու վերաբերյալ համաձայնություն տալու և պայմանագրերի կնքման հետ կապված հարաբերությունները:

2. Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում (այսուհետ՝ տարածք) կապի սարքավորումներ տեղակայելու և սպասարկելու համար տարածքներն օգտագործման են տրամադրվում ուղղակի ձևով:

3. Էլեկտրոնային հաղորդակցության օպերատորի (այսուհետ՝ դիմումատու) և (կամ) էլեկտրոնային հաղորդակցության մի քանի օպերատորների (միասին՝ դիմումատուներ) կողմից համատեղ՝ պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումներ տեղակայման մասին դիմում ստանալու դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը, իսկ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տնօրինությանը հանձնված

շենքերի և շինությունների մասով՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը (այսուհետ՝ համապատասխան իրավասու մարմին) դիտարկում են տվյալ տարածքում կապի սարքավորումների տեղակայման և համատեղ շահագործման հնարավորության հարցը:

4. Համապատասխան իրավասու մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում և azdarar.am կայքում տեղադրում է այն տարածքների ցանկը, որտեղ տեխնիկական ու տարածքային պայմանները թույլ են տալիս տեղադրել և շահագործել կապի սարքավորումներ, սակայն էլեկտրոնային հաղորդակցության ոչ մի օպերատորի կողմից այդ տարածքների օգտագործման մասին դիմում չի ներկայացվել: Դիմումատուների կողմից այդպիսի տարածքներում կապի սարքավորումներ տեղադրելու և շահագործելու մասին ներկայացված դիմումները քննարկվում են սույն կարգին համապատասխան:

5. Դիմումատուն (դիմումատուները) դիմումը ներկայացնում է համապատասխան իրավասու մարմին՝ դրանում նշելով իրավաբանական անձի պետական գրանցման և (կամ) անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման համարը և դիմումին կցելով՝

1) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի շահագործման լիցենզիայի պատճենը.

2) տեղակայվելիք սարքավորման (այդ թվում՝ օժանդակ հարմարանքների) հետևյալ ֆիզիկական չափորոշիչները՝ բարձրությունը, քաշը, այն մակերեսը, որը կարող է տեղադրվելուց հետո զբաղեցնել սարքավորումը (տեխնիկական տվյալները՝ ներառյալ օգտագործվող հաճախականությունը, հաղորդակի հզորությունը և ճառագայթման դիագրամը), ինչպես նաև սարքավորման սպասարկման համար անհրաժեշտ տարածքը (քառակուսի մետրով).

3) ռադիոհաճախականության տիրույթի էլեկտրամագնիսական ճառագայթումների աղբյուր հանդիսացող սարքերի շահագործումը թույլ տալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության դրական եզրակացությունը.

4) պայմանագրի գործողության առաջարկվող ժամկետի մասին որոշումը:

6. Դիմումներն ու սույն կարգի 5-րդ կետով նախատեսված փաստաթղթերը կարող են ներկայացվել թղթային կամ փոստային տարբերակով, ընդ որում, փոստային տարբերակով պատվիրված դիմումների դեպքում համապատասխան իրավասու մարմնում մուտքագրվելու ժամկետը հավաստվում է փոստային առաքիչի կողմից ներկայացվող N 8 ձևի գրքում համապատասխան իրավասու մարմնի ստորագրությամբ, ինչպես նաև ծանուցման թերթիկում, եթե դիմումատուն պատվիրել է նման ծառայություն:

7. Դիմումն ստանալուց հետո համապատասխան իրավասու մարմինը 20 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին գրավոր տեղեկացնում է տարածքի օգտագործման իրավունքի տրամադրման և նրա հետ պայմանագիր կնքելու որոշման կամ դիմումը մերժելու մասին:

8. Դիմումի բավարարման դեպքում դրա մասին դիմումատուին տեղեկացնող գրությանը կցվում է տիպային պայմանագրի ձևին համապատասխան մշակված՝ ստորագրման առաջարկվող պայմանագրի նախագիծը: Պայմանագիրը պետք է պարունակի պարտադիր դրույթներ կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման գնի, դրա վճարման պայմանների, պայմանագրի գործողության ժամկետի, կնքման օրվա մասին: Ընդ որում, պայմանագրի գործողության ժամկետը պետք է սահմանվի 10 տարի, եթե դիմումատուի կողմից ավելի կարճ ժամկետ չի առաջարկվել: Պայմանագրի կնքման ամբողջ գործընթացը (դիմումի բավարարման օրվանից սկսած) պետք է տևի առավելագույնը 5 աշխատանքային օր:

9. Երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ անգամ դիմում ներկայացնելու դեպքում դիմումատուն (դիմումատուները) ներկայացնում է տեղեկատվություն սույն կարգի 5-րդ

կետի 2-րդ ենթակետով նախատեսված սարքավորումների մասին, ինչպես նաև 3-րդ ենթակետով նախատեսված եզրակացությունը, 4-րդ ենթակետով նախատեսված որոշումը, իսկ սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված լիցենզիայի գործողության ժամկետի ավարտից հետո՝ նաև համապատասխան նոր լիցենզիայի պատճենը:

10. Դիմումը մերժվում է, եթե՝

1) Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ տվյալ տարածքում արգելվում է տեղակայել և սպասարկել կապի սարքավորումներ.

2) դիմումատուն օրենքով սահմանված կարգով անվճարունակ կամ սնանկ է ճանաչված.

3) համաձայնություն տալու և պայմանագիր կնքելու դեպքում կխախտվեն և (կամ) կսահմանափակվեն պայմանագիր ունեցող այլ անձանց իրավունքները, կամ պայմանագրի կատարումը կարող է տեխնիկապես բացասական ազդեցություն ունենալ նրանց գործունեության վրա.

4) ներկայացված փաստաթղթերը թերի են, և չեն կատարվել սույն կարգի 12-րդ կետով նախատեսված պահանջները:

11. Դիմումատուի կողմից ներկայացված փաստաթղթերը թերի լինելու հիմքով դիմումը մերժվում է, եթե համապատասխան իրավասու մարմնի կողմից դրա մասին պատշաճ ձևով տեղեկացվելուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուն չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը կամ նյութերը:

12. Եթե սույն կարգի 10-րդ կետում նշված մերժման հիմքերն սպառիչ են, և ներկայացված դիմումը չի կարող մերժվել այլ պատճառաբանությամբ, ապա դիմումի մերժումը պետք է հիմնավորված լինի համապատասխան եզրակացությամբ:

13. Պայմանագիր կնքած անձանց՝ շահագործման տրամադրված տարածք մուտք գործելու (անցագրային ռեժիմ, ըստ անհրաժեշտության՝ շուրջօրյա մուտքի հնարավորություն և այլն), տեղակայված սարքավորումների էներգասնուցման, վերանորոգման, սպասարկման և այլ անհրաժեշտ գործողությունների իրականացման հետ կապված

հարցերը կարգավորվում են պայմանագրով: Ցանկացած դեպքում պայմանագիր կնքած անձը պետք է հնարավորություն ունենա պատշաճ կերպով շահագործելու տեղակայված կապի սարքավորումները:

14. Սույն կարգի 10-րդ կետում նշված հանգամանքների ստուգման նպատակով՝ մինչև դիմումատուի հետ պայմանագրի կնքումը համապատասխան իրավասու մարմինը շենքը կամ շինությունը տիրապետող և (կամ) օգտագործող պետական մարմնի և շահագրգիռ մարմինների հետ համատեղ կարող է ուսումնասիրություն իրականացնել:

15. Պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների տանիքներին ու ձեղնահարկերում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման համար ամսական վճարի չափը սահմանվում է հետևյալ բանաձևով՝

$$V_{\text{տ}} = [(U_{\text{կ}} / S_{\text{ը}}) / 12] \times S_{\text{օգտ}},$$

որտեղ՝

$V_{\text{տ}}$ -ն ամսական վճարի չափն է (հաշվարկային վարձավճարը)՝ արտահայտված դրամով,

$U_{\text{կ}}$ -ն համապատասխան շենքի (շինության) կադաստրային արժեքն է՝ արտահայտված դրամով,

$S_{\text{ը}}$ -ն շենքի (շինության) անշարժ գույքի սեփականության վկայականում արտացոլված ընդհանուր մակերեսն է (քառակուսի մետրով),

$S_{\text{օգտ}}$ -ն կապի սարքավորումների փաստացի զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված տարածքի (տարածքների) մակերեսն է (քառակուսի մետրով),

12-ը տարվա ամիսների թիվն է:

16. Եթե սույն կարգի 15-րդ կետով սահմանված բանաձևով հաշվարկված վարձավճարի մեծությունն ստացվում է ավելի փոքր, քան՝ տվյալ շենքում (շինությունում) նույն տարածքի օգտագործման համար կնքված վերջին պայմանագրով (պայմանագրերով) սահմանված վարձավճարի մեծությունը, ապա հաշվարկային վարձավճարի չափը

սահմանվում է վերջին պայմանագրով (պայմանագրերով) սահմանված ամենաբարձր վճարի չափից ոչ պակաս:

17. Մեկից ավելի էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի օպերատորների կողմից կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման նպատակով մեկ պասիվ ենթակառուցվածքի (աշտարակներ, կայմեր և ձողեր) համատեղ օգտագործման դեպքում սույն կարգի 2-րդ կետում նշված տարածքներում կապի սարքավորումների տեղակայման և սպասարկման համար ամսական վճարի չափի նկատմամբ կիրառվում են նվազեցնող գործակիցներ՝ հետևյալ սկզբունքով՝

1) պայմանագիր կնքած երկու անձանց դեպքում՝ 0,8 գործակից՝ պայմանագրի յուրաքանչյուր կողմի համար.

2) պայմանագիր կնքած երեք և ավելի անձանց դեպքում՝ 0,6 գործակից՝ պայմանագրի յուրաքանչյուր կողմի համար:

18. Սույն կարգի 15-րդ կետով սահմանված վարձավճարը (այսուհետ՝ սկզբնական վարձավճար) բաշխվում է հետևյալ համամասնություններով՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից սպասարկվող շենքերում և շինություններում սկզբնական վարձավճարի 100 տոկոսը հատկացվում է «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը.

2) մյուս կազմակերպությունների կողմից սպասարկվող շենքերում և շինություններում սկզբնական վարձավճարի 90 տոկոսը հատկացվում է տվյալ շենքը, շինությունը սպասարկող կազմակերպություններին (եթե այդպիսիք առկա են) կամ իրավասու մարմնին, իսկ 10 տոկոսը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր

պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը.

3) սույն կարգով հաշվարկված՝ պայմանագրով սահմանված վարձավճարի և սկզբնական վարձավճարի մեծության դրական տարբերության 10 տոկոսը հատկացվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, 40 տոկոսը՝ տվյալ շենքը, շինությունն սպասարկող կազմակերպությանը կամ իրավասու մարմնին, իսկ 50 տոկոսն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գանձապետական միասնական հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ